Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ԵՄ-Եվրոպայի խորհուրդ ծրագրային համագործակցության կառուցակարգում ընդգրկված ծրագրերի միջնաժամկետ արդյունքները

Ի՞նչ է Ծրագրային համագործակցության կառուցակարգը

2014թ. ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնվել են իրականացնել թիրախային համագործակցության միջոցառումներ ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին մոտեցնելու մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության եվրոպական ստանդարտներին: Ծրագրերն իրականացվում են 2015-2017թթ. Ծրագրային համագործակցության կառուցակարգի (ԾՀԿ) շրջանակներում: Ծրագրերը հիմնականում ֆինանսավորվում են ԵՄ կողմից, և Եվրոպայի խորհուրդը համաֆինանսավորում և իրականացնում է դրանք:

Բացի տասնչորս տարածաշրջանային ծրագրերից, **Հայաստանի համար** կան **չորս գերակա ծրագրեր**, որոնց **ընդհանուր բյուջեն կազմում է 2.2 միլիոն եվրո:**

Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում

Ծրագրի տևողությունն է 2015թ. մարտի 1-ից մինչև 2017թ. փետրվար ամիսը: Ծրագրի բյուջեն կազմում է 900,000 եվրո: (մանրամասն)

- Հրատարակվել է Հայաստանի Հանրապետության բանտերում առողջապահության գնահատման առաքելության հաշվետվությունը:
- Մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման» մասին հայեցակարգը և առաջարկություններ ստանալու նպատակով շրջանառվել պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային փորձագետների շրջանում:
- Հայեցակարգում տեղ գտած առաջարկությունների հիման վրա փոփոխություններ են մշակվել Քրեակատարողական օրենսգրքում, Քրեական օրենսգրքում, Քրեական դատավարության օրենսգրքում, «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 825-Ն որոշման մեջ և կարծիքի համար ուղարկվել Արդարադատության նախարարություն:

- Մշակվել է քրեակատարողական 11 հիմնարկների բուժմասերի համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերման ցանկը և դրանց տեխնիկական բնութագրերը, որոնք հաստատվել են Արդարադատության նախարարության կողմից և ներկայացվել մրցառքի խորհրդին՝ մրցույթի հայտարարությունը ս.թ. հոկտեմբերին հրապարակելու նպատակով:
- Մշակվել և վերանայվել է վերապատրաստման երկու դասընթաց՝ «Բանտերում առողջ ապրելակերպի խթանման ու հիվանդությունների կանխարգելմանն ուղղված գործողություններ» և «Հայաստանի քրեակատարողական հիմնարկների բժշկական և ոչ բժշկական անձնակազմի համար բժշկական էթիկա և մարդու իրավունքներ» թեմաներով:
- Ստեղծվել է 33 տեղացի դասընթացավարներից կազմված ցանց, որը կասկադային սեմինարներ կանցկացնի քրեակատարողական հիմնարկների բժշկական և ոչ բժշկական անձնակազմի համար՝ նախատեսվում է սկսել ս.թ. նոյեմբերին:

Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ

Ծրագիրն իրականացվում է 2015թ. հուլիսից մինչև 2017թ. հուլիս: Ծրագրի բյուջեն կազմում է 500,000 եվրո: (մանրամասն)

- Տրամադրվել է փորձագիտական աջակցություն՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը, ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենքը, ՀՀ դատախազության մասին օրենքը մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով:
- Արդարադատության ակադեմիայի համար պատրաստվել են չորս դասընթացներ՝ նախատեսված քննիչների համար հետևյալ թեմաներով.
  - Քրեական գործերով քննության ընդհանուր մեթոդաբանությունը
  - Խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունների քննությունը և կյանքի իրավունքին առնչվող գործերը
  - Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ գործերի քննությունը
  - Մինչդատական կալանքը և քրեական գործի քննության հարակից խնդիրները:
- Ձևավորվել է 22 մասնագետներից բաղկացած խումբ, ովքեր 2016թ.-ի հոկտեմբերին կսկսեն դասավանդել այս առարկաները Արդարադատության ակադեմիայում:
- Տպագրվել է Ապացույցների թույլատրելիության ձեռնարկ՝ նախատեսված դատախազների համար:

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի մասին ծրագիր

Ծրագիրն իրականացվում է 2015թ. հունվարից մինչև 2016թ. դեկտեմբեր: Ծրագրի բյուջեն կազմում է 400,000 եվրո: (մանրամասն)

- Ծրագրի շրջանակներում ներմուծվել է էթիկայի կանոնների մոդել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների, ուսանողների և ղեկավարության համար: Այն քննարկվել է ութ առաջատար համալսարանների դասախոսներից, ղեկավարությունից և ուսանողներից կազմված ֆոկուսային խմբերում:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ մշակվել է երեք գործիքակազմ: Գործիքակազմերը ընդգրկում են հաշվետվողականության և գնահատման նմուշներ համալսարանների դասախոսների, ուսանողների և ղեկավարության համար: Գործիքակազմերի նպատակն է բարձրագույն հաստատությունների կառավարման համակարգի, մարդկային ռեսուրսների կառավարման, ուսանողների գնահատման և ուսումնական ծրագրերի թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը, ինչպես նաև հնարավորություն տալով ուսանողներին և դասախոսներին «ահազանգել» կոռուպցիայի կամ այլ իրավախախտ վարքագծի վերաբերյալ կասկածների դեպքում:
- Հայաստանի կրթության և գիտության նախարարության կողմից հաստատվելուց անմիջապես հետո այս նորմատիվ չափանիշները և գործիքակազմերը կառաջարկվեն Հայաստանի ԲՈՒՀ-երին:

Ընտրությունների վերաբերյալ երկարաժամկետ աջակցություն ընտրությունների գործընկերներին

1-ին բաղադրիչ

Ծրագիրն իրականացվում է 2015թ. հունվարից մինչև 2017թ. դեկտեմբեր: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 95,000 եվրո: (մանրամասն)

- Հայաստանի նոր Ընտրական օրենսգրքի վերաբերյալ երկու համատեղ կարծիք են տրամադրվել Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից: Ըստ 2016թ. հուլիսին ընդունված 2-րդ կարծիքի՝ 2016թ. հունիսին փոփոխված Ընտրական օրենսգիրքը ներառում է նախկին առաջարկների զգալի քանակ:

2-րդ բաղադրիչ

Ծրագիրն իրականացվում է 2016թ. հունվարից մինչև 2017թ. հունիս: Ծրագրի բյուջեն կազմում է 302,139 եվրո:

- Իրականացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) ուսուցման ծրագրերի գնահատում, և ԿԸՀ-ին առաջարկներ են տրվել դրանց բարելավման համար:
- Աշխատել ենք ԿԸՀ-ի հետ՝ մշակելու վերջինիս հաղորդակցության ռազմավարությունը

և գործունեության աշխատանքային պլանը:

- 2016թ. հունիսի 9-10-ը տեղական դիտորդական կազմակերպությունների համար կազմակերպվել է սեմինար նոր ընտրական օրենսգրքի վերաբերյալ:
- Ավելի քան 70 կին համայնքի ղեկավար, ավագանու անդամ և քաղաքականորեն ակտիվ կին մասնակցել են «Կանանց օրակարգը 2016թ. տեղական ընտրություններում» համազգային համաժողովին, որի նպատակն էր խրախուսել նրանց ընտրություններում առաջադրվել որպես թեկնածուներ: Եվրոպայի խորհուրդն օժանդակել է այս միջոցառմանը:
- Հինգ սեմինար և հինգ լիդերության դպրոց են կազմակերպվել Հայաստանի հինգ շրջանների մոտ 80 քաղաքականորեն ակտիվ կանանց համար՝ պատրաստելու նրանց մասնակցելու տեղական ընտրություններին որպես թեկնածուներ:
- Հիսուն լրագրողի համար կազմակերպվել է երկու դասընթաց ընտրությունների ժամանակ լրագրողների իրավունքների և պարտականությունների, ընտրակեղծիքի բացահայտման և անկախ լրատվության վերաբերյալ:
- Մոտ 200 դիտորդ են վերապատրաստվել 2016թ. տեղական ընտրություններին ընդառաջ:
- Ավագ դպրոցի մոտ 220 ուսուցիչ է վերապատրաստվել ընտրական դերախաղերի անցկացման թեմայով այն դպրոցականների համար, որոնք առաջին անգամ պետք է մասնակցեն ընտրական գործընթացներին:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք http://eap-pcf-eu.coe.int

Կոնտակտային անձ՝ Տատյանա Բաևա, խոսնակ/ մամուլի պատասխանատու, Tatiana.Baeva@coe.int, +33 (0)685 11 64 93:

հոկտեմբեր, 2016թ.